# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Ձմեռային բաճկոն | Ձմեռային բաճկոն | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Անվտանգության աշխատակիցների ձմեռային բաճկոն: Բաճկոնի արտաքին տեսքը կից ֆայլում Մինչև գնային առաջարկ ներկայացնելը մասնակիցը պարտադիր պետք է նախապես ծանոթանա Պատվիրատուի կողմից ներկայացված հագուստի նմուշին և համաձայնեցնի կտորի տեսակն ու գույնի երանգը: Բաճկոնը կարվում է 110 – 140 գր/մ² մակերեսային խտությամբ Օքսֆորդ տեսակի ջրակայուն կտորից: Բաճկոնի կտորի գույնը՝ սև: Բաճկոնի ներքևի կողային հատվածում պետք է լինեն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 45 աստիճանի տակ 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածը մշակվում է մոտ 3 սմ լայնությամբ մանժետներով: Բաճկոնի կրծքավանդակային աջ և ձախ կողմերում կարված են երկու վրադիր գրպաններ՝ կափարիչներով,: Ձախ կողմի գրպանը բաժանված է երկու գրպանի: Կափարիչները կոճկվում են կոճգամով: Բաճկոնի օձիքը 7-8սմ լայնությամբ, սուրանկյուն եզրերով փռված ծալովի օձիք է՝ հանովի արհեստական, սև գույնի մորթիով: Օձիքի միացումը կոճակներով: Բաճկոնը ունի գլխանոց /կապիշոն/, որը կոճգամներով ամրանում է բաճկոնի օձիքի մասում: Գլխանոցի եզրային մասում անցկացված է քուղ: Բաճկոնը կոճկվում է բարձրորակ պլաստմասե «տրակտոր» տիպի կայծակաճարմանդով: Բաճկոնը և թևքերը ներքևի մասում վերջանում են ռեզինե մանժետներով՝ կտորի վրա ներկարված ռեզինով: Բաճկոնի առաջամասում, ետևամասում և գլխանոցում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 180-220 գ/մ2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խտությամբ 15 մմ հաստության սինտեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ, որի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 55-60 գ/մ2 : Միաժամանակ սինտեպոնի և երեսի կտորի միջև պետք կարվի «ֆլիս» տեսակի կտոր որպեսզի սինտեպոնը դուրս չգա: Բաճկոնի առջևի գրպանների վերևում, երկու կողմից կարված են փափուկ երեսով կպչունակներ՝ 3,0×13,0 (±0,5) սմ, իսկ մեջքի վերևի մասում 4,0×28,0 (±0,5) չափերով: Փափուկ կպչունակները պետք է կարվեն երկու խաչաձև անկյունագծով կարերով: Դրանց վրա պետք է ամրացվեն «Անվտանգություն» և «Հանրային հեռուսատընկերություն» ասեղնագործված թևանշանները /շեվրոնները/: Դրանց ֆայլերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները և հագուստի չափսը : |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Փաթեթավորումը` հակերով, հակերի մեջ 2 – 3 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1հատ: Անհրաժեշտ քանականությունններն ըստ մոտավոր չափսերի. S – 1 M - 7 L - 5 XL - 5 XXL – 2 Պարտադիր պայման է յուրաքանչյուր աշխատակցի չափսերի անհատական չափագրումը Մատակարարի կողմից: Մատակարարումից 10 օր առաջ մատակարար կազմակերպությունը հաստատման է ներկայացնում արտադրված նմուշը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ` գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուի պահանջով մատակարարի հաշվին կարող է կատարվել լաբորատոր ստուգում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | - | - | - | - | - |